# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2019թ. ապրիլի 17-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի I ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Թերեզա Սամսոնյանը:

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. <<Հրաժեշտ Այբբենարանին>> միջոցառման կազմակերպում:

2.Լուսանկարվել հուշ-ալբոմ /վինետկա/:

3.Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին.- <<Հրաժեշտ Այբբենարանին>> միջոցառման կազմակերպման հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Թ. Սամսոնյանը՝ նշելով, որ դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում սովորողների գեղագիտական դաստիարակությանը: Այդ նպատակով դպրոցում կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ: Դպրոցում ավանդույթ է դարձել <<Հրաժեշտ Այբբենարանին>> միջոցառման կազմակերպումը: Այդ իսկ պատճառով դասղեկը տեղեկացրեց, որ կազմակերպելու է գրաճանաչության տոնին նվիրված միջոցառում: Արդեն սցենարը պատրաստ է, սովորողները սովորել են իրենց դերերը: Ծնողխորհրդի նախագահ Լիլիթ Գրիգորյանը առաջարկեց ծնողների աջակցությունը դահլիճի ձևավորման հարցում: Այդ առաջարկն արժանացավ ծնողների հավանությանը:

Որոշեցին.-Ապրիլի վերջին կազմակերպել <<Հրաժեշտ Այբբենարանին>> միջոցառումը և օգնել դասղեկին դահլիճի ձևավորման հարցում:

2.Լսեցին.- Հուշ-ալբոմ /վինետկա/ լուսանկարվելու հարցը

Ծնողխորհրդի քարտուղար Լիլիկ Հովհաննիսյանը հիշեցրեց, որ ամեն տարի առաջին դասարանցիները լուսանկարվում են վինետկաներ: Ծնողները ցանկություն ունեն չխախտել այդ ավանդույթը: Դասղեկը տեղեկացրեց, որ մարզպետի հրահանգով արգելված է նկարիչների մուտքը դպրոց: Դասարանի աշակերտ Անդրանիկ Դավթյանի ծնողն առաջարկեց սովորողների նկարվելը կազմակերպել հենց իրենց տանը: Ծնողները միաձայն համաձայնեցին:

Որոշեցին- Հավաքագրել 3500-ական դրամ, Դավթյան Անդրանիկենց տուն հրավիրել նկարիչ և լուսանկարվել:

3. Լսեցին.-Ընթացիկ հարցեր

Ելույթ ունեցավ դասղեկը՝ ներկայացնելով երեխաների սանիտարական վիճակը: Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների գրենական պիտույքների, համազգեստների և հաճախումների նկատմամբ: Դասղեկը հորդորեց, որ ծնողներն ավելի ուշադիր լինեն իրենց երեխաների ուսման հարցում:Պահեն ծնող- դասղեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելեն դպրոց իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.-Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին միշտ պատրաստ:

Ծնողխորհրդի նախագահ՝ / Լիլիթ Գրիգորյան /

Քարտուղար՝ /Լիլիկ Հովհաննիսյան/